

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ

ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2016 թվականի փետրվարի 24-ի Քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Օրենսգիրք) 46-րդ հոդվածի 1-ին մասում «դատարանը» բառից հետո լրացնել «նրա կամ շահագրգիռ անձանց կամ մարմինների դիմումի հիման վրա» բառերը:

Հոդված 2. Օրենսգրքի 48-րդ հոդվածի 1-ին մասում «դատարանը» բառից հետո լրացնել «նրա կամ շահագրգիռ անձանց կամ մարմինների դիմումի հիման վրա» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԼՐԱՅՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 46. Քաղաքացուն անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը վերացնելու հետևանքները

1. Անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվելու դեպքում դատարանը *նրա կամ շահագրգիռ անձանց կամ մարմինների դիմումի հիման վրա* վերացնում է նրան անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը: Դատարանի վճռի հիման վրա վերացվում է այդ քաղաքացու գույքի հավատարմագրային կառավարումը:

Հոդված 48. Մահացած ճանաչված քաղաքացու հայտնվելու հետևանքները

1. Մահացած ճանաչված քաղաքացու հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվելու դեպքում դատարանը *նրա կամ շահագրգիռ անձանց կամ մարմինների դիմումի հիման վրա* վերացնում է նրան մահացած ճանաչելու մասին վճիռը:

2. Անկախ իր հայտնվելու ժամանակից՝ քաղաքացին իրավունք ունի յուրաքանչյուր անձից հետ պահանջել պահպանված գույքը, որն անհատույց անցել էր այդ անձին՝ քաղաքացուն մահացած ճանաչելուց հետո, բացառությամբ սույն օրենսգրքի 276-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված դեպքերի:

3. Մահացած ճանաչված քաղաքացու գույքը հատուցելի գործարքներով ձեռք բերած անձինք պարտավոր են նրան վերադարձնել այդ գույքը, եթե ապացուցվում է, որ գույքը ձեռք բերելիս նրանք գիտեին, որ մահացած ճանաչված քաղաքացին կենդանի է: Այդ գույքը բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում հատուցվում է դրա արժեքը:

4. Եթե մահացած ճանաչված քաղաքացու գույքը ժառանգման իրավունքով անցել է համայնքին և իրացվել է սույն հոդվածով նախատեսված պայմանների պահպանմամբ, ապա քաղաքացուն մահացած ճանաչելու մասին վճիռը վերացվելուց հետո նրան է վերադարձվում գույքի իրացումից ստացված գումարը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 2008 թվականի դեկտեմբերի 17-ի Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածում «նրա» բառից հետո լրացնել «կամ շահագրգիռ անձանց կամ մարմինների» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՎ ԼՐԱՑՎՈՂ ՀՈԴԿԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հոդված 170. Անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված քաղաքացու ներկայանալու կամ նրա գտնվելու վայրը հայտնի դառնալու հետևանքները

Անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված քաղաքացու ներկայանալու դեպքում դատարանը նրա *կամ շահագրգիռ անձանց կամ մարմինների* դիմումի հիման վրա վճիռ է կայացնում նախկինում կայացրած իր վճիռը վերացնելու մասին: Այդ վճռի հիման վրա վերացվում է գույքի նկատմամբ խնամակալությունը, և չեղյալ է համարվում քաղաքացիական կացության ակտերի գրանցամատյանում նրա մահվան վերաբերյալ գրառումը:

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ
«ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ
ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

1.	<p align="center">Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</p>
	<p>«Քաղաքացիական օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» և «Քաղաքացիական դատավարության օրենսգրքում լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթը մշակվել է, հաշվի առնելով գործնականում առաջացող բազմաթիվ այն դեպքերը, երբ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձի գտնվելու վայրը հայտնի է, բայց վերջինս չի ներկայանում դատարան՝ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին դատարանի վճիռները վերացնելու համար: Այսպես, Քաղաքացիական օրենսգրքի 46-րդ հոդվածով սահմանված է, որ անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվելու դեպքում դատարանը վերացնում է նրան անհայտ բացակայող ճանաչելու մասին վճիռը, իսկ 48-րդ հոդվածի 1-ին մասով ամրագրված է, որ մահացած ճանաչված քաղաքացու հայտնվելու կամ նրա գտնվելու վայրը հայտնաբերվելու դեպքում դատարանը վերացնում է նրան մահացած ճանաչելու մասին վճիռը: Սակայն, հստակ նշված չէ, թե դատարանը ում դիմումի հիման վրա է վերացնում անձին անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին վճիռը: Իսկ Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 170-րդ հոդվածի համաձայն, անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված քաղաքացու ներկայանալու դեպքում դատարանը նրա դիմումի հիման վրա վճիռ է կայացնում նախկինում կայացրած իր վճիռը վերացնելու մասին: Այսինքն, գործող օրենսդրությամբ դատարանը իրավունք ունի կայացնել նախկինում կայացրած իր վճիռը վերացնելու մասին վճիռ միայն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված քաղաքացու դիմումի հիման վրա:</p>
2.	<p align="center">Առաջարկվող կարգավորման բնույթը</p>
	<p>Հիմք ընդունելով վերոգրյալ փաստերը, առաջարկվում է քաղաքացիական օրենսդրության մեջ կատարել լրացումներ՝ մասնավորապես, անհայտ բացակայող</p>

	<p>կամ մահացած ճանաչված քաղաքացու ներկայանալու կամ նրա գտնվելու վայրը հայտնի դառնալու դեպքում դատարանը ոչ միայն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված քաղաքացու, այլև շահագրգիռ անձանց կամ մարմինների դիմումի հիման վրա է վճիռ կայացնում նախկինում կայացրած իր վճիռը վերացնելու մասին:</p> <p>Հարկ է նշել, որ նշված իրավահարաբերությունների կարգավորման նման պրակտիկա գոյություն ունի Ուկրաինայում: Ուկրաինայի Քաղաքացիական օրենսգրքի 45-րդ և 48-րդ հոդվածները և Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 250-րդ հոդվածը նախատեսում են դատարանի կողմից նախկինում անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին կայացրած վճիռները շահագրգիռ անձանց դիմումի հիման վրա վերացնելու դատարանի իրավասությունը:</p>
3.	<p>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</p>
	<p>Նախագծերի փաթեթը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:</p>
4.	<p>Ակնկալվող արդյունքը</p>
	<p>Նախագծերի փաթեթի ընդունմամբ համապատասխան պայմաններ կստեղծվեն անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց հայտնվելու կամ գտնվելու վայրը հայտնի դառնալու դեպքերում դատարանի կողմից նախկինում անհայտ բացակայող կամ մահացած ճանաչելու մասին կայացրած վճիռները շահագրգիռ անձանց կամ մարմինների դիմումի հիման վրա վերացնելու համար:</p>

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ